ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դաշտաքար համայնքում 2015թ Դեկտեմբերի 30-ին տեղի ունեցավ հանրային լսում, որին մասնակցում էին համայնքի ղեկավարը, աշխատակազմը, ավագանին, բուժքույրը և համայնքի բնակիչները:
Հանդես եկավ համայնքի ղեկավար՝ Ն. Մալխասյանը, ներկայացնելով՝ 2015թ 1-ին կիսամյակի և 2015թ 2-րդ կիսամյակի կատարած աշխատանքները:

1. Կանոնավոր կերպով կատարվում է աղբահանում ամիսը 4 անգամ
2. Տարվա ընթացքում կարիքավոր և անապահով ընտանիքներին տրվել է օգնություն 340.000 դրամ և հուղարկավորության նպաստ 300.000 դրամ
3. Գյուղում գործում է գիշերային լուսավորության ցանցը
4. Կատարվել է լուսավորման ցանցի նորոգում
5. Հարկերի հավաքագրումները կատարվել են բյուջեով նախատեսված եկամուտների ժամանակացույցով:
6. Կանոնավոր կերպով իրականացվել է ուսուցիչների և աշակերտների տեղափոխություն Վեդի քաղաքից Դաշտաքար գյուղի միջնակարգ դպրոց:
7. Գիտելիքի օրվա կապակցությամբ առաջին դասարանցիներին հանձնվել են նվերներ:
8. Գյուղում կատարվել են ասֆալտապատման աշխատանքներ:
9. Կազմակերպվել է տարեվերջյան միջոցառում և համայնքի 1-11տ. երեխաներին բաժանվել են ամանորյա նվերներ:
10. Մարզպետարանի կողմից տրված բոլոր հանձնարարությունները կատարվել են ժամանակին:

Համայնքի ղեկավարը նշեց, որ բացի կատարված աշխատանքներից կան շատ աշխատանքներ և դրանք աստիճանաբար կատարվում են:
Համայնքում առկա հիմնախնդիրներից են՝

1.Մանկապարտեզի կառուցում
2.Գյուղապետարանի շենքի վերանորոգում
3.Գյուղամիջյան առուների կիսախողովակների տեղադրում
4.Նոր թաղամասերի արտաքին լուսավորում և փողոցների խճապատում
5. Նոր թաղամասերի գազաֆիկացում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԱԼԽԱՍՅԱՆ